Գ. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՎԱՌՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Սովետական Միության, այդ թվում նաև Սովետական Հայաստանի աշխատավորները մեծ ոգևորությամբ ընդունեցին երկրորդ հնգամյա պլանը։ Միահամուռ հավանություն տալով հնգամյա պլանին, աշխատավոր մասսաները հայրենասիրական ձգտում հանդես բերեցին նրա կենսագործման համար։

1933 թ. Հայաստանում արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության գծով նոր միավորներ չէին առաջադրվում. ամբողջ ուշադրությունը կենտրոնացվում էր արդեն կառուցվող միավորների ավարտման և գործարկման վրա։ Առաջնակարգ տեղերում էին մնում Դավալուի ցեմենտի գործարանի գործարկումը, որը նախատեսվում էր ավարտել ապրիլ-մայիսին, Լարաքիլիսայի քիմիական կոմբինատը, որը պետք է գործարկվեր ավելի շուտ, Ալավերդու պղնձաձուլական և Լափանի հարստացուցիչ գործարանները, որոնք գործարկվելու էին առաջին կիսամյակում։ Քանաքեռի հիդրոէլեկտրակայանի տեմպերին համապատասխան շարունակվելու էր Երևանի կարբիդի 2-րդ գործարանի կառուցումը։

Ղեկավարվելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1933 թ. հունվարյան պլենումի որոշումներով, Հայաստանի կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունները գլխավորեցին մասսաների աշխատանքային վերելքը և ստեղծագործական ակտիվությունը, որն արտահայտվեց՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման և նոր տեխնիկայի յուրացման համար՝ սոցիալիստական մրցության ծավալման մեջ։ Առաջադրված խնդիրները չէր կարելի իրագործել առանց վերջնականապես արմատավորելու սոցիալիստական վերաբերմունքը դեպի աշխատանքը, արտադրությունը. հանրային գույքը։ Իսկ այդ բոլորը հնարավոր էր կատարել միայն էլ ավելի դարպացնելով ու ծավալելով սոցիալիստական մրցությունն ու հարվածային շարժումը։

Սոցիալիստական մրցության նոր ձևերը, որոնք ծագեցին ու զարգացան երկրորդ հնգամյակի առաջին տարիներին, մասսաների պատասխանն էր կուսակցության կողմից առաջ քաշված խնդիրների կենսագործման համար։ 1932 թ., Դոնբասում առաջ եկած իզոտովյան շարժումը՝ տեխնիկան տիրապետող վարպետների արտադրական փորձի հաղորդումն էր արտադրության մեջ աշխատող նորեկներին։ Դրա էությունը մի քանի խոսքով լավ է արտահայտել ինքը՝ Ն. Իզոտովը։ Հարվածայինների համագոնբասյան համագումարում ունեցած իր ելույթում նա ասել է «Իզոտովը նա չէ, ով ինքն է լավ աշխատում, Իզոտովը նա է, ով ինքը լավ է աշխատում և մյուսներին էլ սովորեցնում»[1]։

---

1 «Պրավդա», 17 նոյեմբերի 1932 թ.։

1933 թ. սեպտեմբերի 16-ին ՀԱՄԽ-ի նախագահությունը քննարկեց «Հայկական ՍՍՀ-ում Իզոտով-Վդովինի մեթոդների կիրառման ընթացքի մասին» հարցը։ Արհմիության կենտկոմը նշեց, որ Իզոտով-Վդովինի առաջարկների հանդես գալուց հետո, այդ աշխատանքների ու մեթոդների պարզաբանման, մասսայականացման ու յուսաբանման արդյունքը եղավ մի շարք ձեռնարկությունների կողմից այդ մեթոդների կիրառմանը անցնելը։ ՀԱՄԽ-ի նախագահությունը միաժամանակ նշում էր, որ դեռևս թույլ է մասսայականացվում նրանց առաջարկների էությունն ու նշանակությունը, որի հետևանքով շատ բանվորներ պարզ պատկերացում չունեն նրանց աշխատանքի մեթոդների մասին։ Շարժման ծավալումը տարվում է միակողմանի, ուշադրության կենտրոնում են միայն հերթափոխները, դանդաղ է ընթանում որակյալ բանվորների ամրացումը ետ մնացողներին ու նորեկներին և այլն։

ՀԱՄԽ-ի նախագահությունը առաջարկեց արդյունաբերական ձեռնարկությունների տնտեսական ղեկավարներին ու գործարկոմներին, ուշադրության կենտրոնում պահել Իզոտովի աշխատանքների մեթոդների մասսայականացումը, պարբերաբար քննության առնել նրանց առաջարկների կիրառման ընթացքը, լսել առաջավորների զեկույցները և կատարել փորձի փոխանակում, հատկապես զբաղվել տեխնիկայի տիրապետման ուղղությամբ տարվող աշխատանքների կարգավորմամբ։ «Հարվածային Երևան» թերթին հանձնարարվում էր մեծ տեղ տալ նրանց մեթոդների լուսաբանմանը, հատուկ բրիգադների միջոցով կատարել ուսումնասիրություն՝ փորձի փոխանակման նպատակով[3]։

Համկ(բ)Կ Կենտկոմի ցուցումով 1933 թ. նոյեմբերի 10-ին ՀԱՄԿԽ-ում տեղի ունեցավ ածխային, մետալուրգիական և նավթային արդյունաբերության հարվածային բանվորների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների հավաք՝ նվիրված իզոտովյան աշխատանքի մեթոդներին[4]։ Հավաքն ընդունեց կոչ՝ ուղղված ՍՍՀՄ-ի արդյունաբերական բոլոր ձեռնարկությունների բանվոր-ծառայողներին։ «Մենք՝ նոր տեխնիկայի հարվածայիններս, կոչ ենք անում արհմիութենական կազմակերպություններին,— ասվում էր կոչում,— գլխավորել և ամուր ղեկավարել իզոտովյան շարժումը, որը հանդիսանում է Լենինյան մրցության մի մասը։ Ուրեմն երևան բերեք իզոտովյաններին ձեր ձեռնարկություններում, կազմակերպեցեք ետ մնացողների ուսուցումը, ստեղծեք իզոտովյան տներ, ընկերական լայն հանդիպումներ՝ փորձի փոխանակման նպատակով... Այդ սոցիալիստական մրցությունը պետք է ապահովի արտադրական առաջադրանքի անպայման կատարումը և երկրորդ հնգամյակի առաջին տարվա հաղթական ավարտումը բոլոր արդյունաբերական ձեռնարկություններում և ճյուղերում»[5]։

Սովետական Միության առաջավոր բանվորների կոչը լայն տարածում գտավ նաև Հայաստանում։ Առաջինը նրան արձագանքեցին Երևանի կարբիդի գործարանի բանվորները։ Գործարանի հսկողքի և կրի արտադրամասերի երկու բրիգադները չէին կատարում իրենց արտադրական պլանները։ Կոչի քննարկումից հետո առաջին բրիգադին ամրացվեց անվանի կարբիդագործ Մ. Ուլոյանը, իսկ երկրորդին՝ Գ. Չփլախյանը։ Արդյունքը եղավ այն, որ երկու բրիգադներն

2 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 65, ց. 4, գ. 1223, թ.5։
3 Նույն տեղում, թ. 6։
4 Նույն տեղում, գ. 1714, թ. 19։
5 Նույն տեղում, թ. 22։

Էլ կատարեցին չորրորդ եռամսյակի պլանները (110,5 և 103,2 տոկոսով)[6], իսկ Նոյեմբերի 14-ին 2-րդ հնգամյակի առաջին տարին փակեց նաև գործարանը, պլանով նախատեսված 2730 տոննայի փոխարեն՝ երկրին տալով 2733 տոննա կարբիդ[7]։ Հալոցքի արտադրամասի իզոտովական վարպետ Մ. Մովսիսյանը 25 օրում 7 նորեկ բանվորների սովորեցրեց կարբիդ ստանալու տեխնոլոգիական պրոցեսները, նրանց զինեց տեխնիկապես և հասցրեց առաջավորներին։

Գործարանում ավարտվեց արտադրամասերի միջև ծավալված սոցիալիստական մրցության պայմանագրերի ստուգատեսը։

Իզոտովական-վդովինականների կոչը քննության առավ նաև Երևանի մեխանիկական գործարանի կոլեկտիվը։ Իզոտովական Ն. Մեսրոպյանը 1933 թ. 4-րդ եռամսյակում բարձրացրեց արտադրամասի բանվորներ՝ Ա. Զոլոխյանի, Ա. Իսմայիլովի, Պ. Նիկոզոսյանի և Ս. Թադևոսյանի արտադրական որակավորումը։ Կոմերիտական Գ. Գալստյանը 4 ամսվա ընթացքում Կ. Նիկոզոսյանին դարձրեց 5-րդ կարգի վարպետ, հայտնի իզոտովական դարբին Պ. Մկրտչյանը նորեկ բանվորներ՝ Գ. Գևորգյանին, Ս. Բունյաթյանին և Ա. Նավոյանին կարճ ժամանակամիջոցում դարձրեց գործարանի լավագույն որակյալ բանվորներ։ Գործարանում 11 իզոտովականներ վեց ամսվա ընթացքում բարձրադրին 21 երիտասարդ բանվորների որակավորումը[8]։

Իզոտովի մեթոդները լայնորեն արմատավորվեցին նաև Ալավերդու Լենինյան հանքերում, ուր 1933 թ. վերջին այդ մեթոդով արդեն աշխատում էին՝ 11 բրիգադ[9]։ Այստեղ լավ էր կազմակերպված գործիքներն ու հաստոցները կանոնավոր վիճակում հերթափոխներին հանձնելու գործը, տեխմինիմումի խմբակների աշխատանքը։ Իսկ Ղափանի հանքերում օգտագործում էին արտադրական փորձի հաղորդման նաև այնպիսի ձև, ինչպիսին էր՝ լավագույն հորատողների և աշղեկների մեկնումը հետամնաց տեղամասերը, որտեղ նրանք բանվորներին սովորեցնում էին աշխատանքի նոր մեթոդները, ծանոթացնում տեխնիկայի հետ։ Այստեղ կարևոր դեր էին կատարում այսպես կոչված իզոտովյան դպրոցները, որտեղ վարպետ-իզոտովականները հանքափորներին ծանոթացնում էին աշխատանքի առաջավոր ձևերն ու մեթոդները։ Այսպես, №№ 1, 2, 5 և 6 հանքերում կազմակերպվեց չորս իզոտովյան խմբակներ, որոնց միջոցով չորրորդ եռամսյակում բարձրացվեց 19 բանվորների որակավորումը[10]։

1933 թ. Նոյեմբերի 4-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախաձեռնությամբ հրավիրվեց արդյունաբերության աշխատողների հանրապետական խորհրդակցություն, որտեղ քննարկվեց երկրորդ հնգամյակի առաջին տարվա պլանների կատարման ընթացքը։ Խորհրդակցությունը նշեց, որ իզոտովյան շարժման ծավալման, աշխատանքի լավ կազմակերպման, նոր տեխնիկայի տիրապետման շնորհիվ բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը և արտադրանքի որակը, իջել է ինքնարժեքը։ Հանրապետության ժողկոմատային պետական արդյունաբերության մեջ ընդհանուր արտադրանքի արժեքը՝ 1932 թ. 45 միլիոն 982 հազար ռուբլու փոխարեն 1933 թ. 10 ամիսների ընթացքում կազմեց 50 միլիոն

---

6 «Խորհրդային Հայաստան», 2 հունվարի 1934 թ.։
7 «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի 1933 թ.։
8 «Խորհրդային Հայաստան», 28 դեկտեմբերի 1933 թ.։
9 «Պայքար պղնձի համար», 1 դեկտեմբերի 1933 թ.։
10 Նույն տեղում։

504 հազար 600 ռուբլի, կամ աճեց 9,8 տոկոսով[11]։ Ծանր արդյունաբերության ժողկոմատի սիստեմի ձեռնարկություններում արտադրանքն ավելացավ 4,9 տոկոսով, թեթև արդյունաբերությանը՝ 24,9, սննդարդյունաբերությանը՝ 49,9 և մատակարարման ժողկոմատի գծով՝ 0,6 տոկոսով[12]։ Հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում սոցմրցման և հարվածայնության մեջ ընդգրկված բանվորների թիվը 1932 թ. նոյեմբերի՝ 81,6 տոկոսի դիմաց, 1933 թ. հասավ 84,8 տոկոսի[13]։

Այսպիսով, իզոտովյան շարժումը կյանքի կոչեց ստեղծագործական նոր ուժեր և այն ուղղեց կուսակցության կողմից առաջ քաշված խնդիրները կյանքում կենսագործելուն։

Մեր երկրի աշխատավորությունը աշխատանքային սխրանքներով դիմավորեց ՀամԿ(բ)Կ XVII համագումարը։ Մոսկվայի բանվորների նախաձեռնությամբ 1933 թ. վերջերին, երկրում սկսվեց մասսայական արտադրական արշավ՝ ի պատիվ համագումարի։

Ընդառաջելով Մոսկվայի բանվորների առաջարկին «Պրավդան» սահմանեց կուսակցության XVII համագումարի անվան միութենական կարմիր տախտակ[14]։ Արձագանքելով «Պրավդա»-ին «Խորհրդային Հայաստան» թերթը սահմանեց ՀամԿ(բ)Կ XVII համագումարի անվան հանրապետական կարմիր տախտակ։ Թերթը գրում է. «Կուսակցության XVII համագումարի անվան հանրապետական կարմիր տախտակին կարող են բարձրացվել այն արդյունաբերական ձեռնարկությունները (գործարաններ, ֆաբրիկաներ, հանքեր, կառույցներ), որոնք կատարել են իրենց տարեկան պլանը՝ որակական ու քանակական ցուցանիշներով։»[15]։

ՀամԿ(բ) XVII համագումարի նախօրյակին սոցիալիստական մրցությունը ծավալվեց նոր թափով։ Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների շատ բրիգադներ իրենց հայտարարեցին համագումարի անվան և պատվով կատարեցին վերցրած պարտավորությունները։

Երևանի մեխանիկական գործարանի կոլեկտիվի ժողովը քննարկելով «Պրավդա»-ի կոչը, պարտավորվեց մրցություն ծավալել Միութենական լավագույն գործարանների շարքը հասնելու և «Պրավդա»-ի կարմիր տախտակին արժանանալու համար[16]։

Գործարանի բանվորները միաժամանակ սոցիալիստական մրցության հրավիրեցին Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի շինարարության և Քանաքեռշինի բանվորներին ու ինժեներա տեխնիկական աշխատողներին։

«Բանվորական Երևան»-ի խմբագրության առաջարկությամբ շուտով ՀամԿ(բ)Կ XVII համագումարի անվան հանրապետական Կարմիր տախտակի է բարձրացվում Երևանի մեխանիկական գործարանի կոլեկտիվը, որը նոյեմբերի 20-ին, ժամկետից մեկ ամիս 10 օր շուտ, կատարել էր տարեկան առաջադրանքը։ 1933 թ. ընթացքում գործարանը պետք տար 2 միլիոն ռուբլու արտա-

---

11 «Խորհրդային Հայաստան», 7 նոյեմբերի 1933 թ.։
12 Նույն տեղում։
13 Նույն տեղում։
14 «Պրավդա», 8 դեկտեմբերի 1933 թ.։
15 «Խորհրդային Հայաստան», 11 դեկտեմբերի 1933 թ.։
16 «Խորհրդային Հայաստան», 12 դեկտեմբերի 1933 թ.։

դրանք, սակայն փաստորեն 11 ամսում երկրին տվել էր 2 միլիոն 231 հազար 150 ռուբլու արտադրանք[17]։

Համկ(բ)կ XVII համագումարի պատվին ծավալված սոցմրցման առաջավոր դիրքերում էին ընթանում նաև մայրաքաղաքի ձեթ-օճառի կոմբինատի բանվոր-ծառայողները։ Այստեղ աշխատանքի լավ կազմակերպման շնորհիվ ձեթի արտադրության ինքնարժեքը իջավ 4,6 տոկոսով, օճառինը՝ 8,0 տոկոսով. բարելավվեց արտադրանքի որակը։ 1932 թ. օճառի 32—40 տոկոս յուղայնության փոխարեն 1933 թ. այն հասավ 40—60 տոկոսի։ Կոմբինատը ձեռք բերած հաջողություններն էլ ավելի ամրապնդեց 1934 թ. հունվարի 25-ին՝ համագումարի բացման օրը կատարելով հնգամյակի 2-րդ տարվա առաջին ամսվա առաջադրանքը։ Դեռևս նոյեմբերին օճառի արտադրամասի գլխավոր օճառագործ և կուսկազմակերպիչ Դ. Հակոբյանի բրիգադը արժանացավ համագումարի անվան։ Արտադրամասը հունվարի պլանը կատարեց 153,3 տոկոսով[18]։

Մեծ էին հաջողությունները նաև մայրաքաղաքի մյուս արդյունաբերական ձեռնարկություններում. 14 արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքի արտադրողականության 1933 թ. պլանը կատարվեց 106 տոկոսով[19]։ Ի պատիվ համագումարի, սոցմրցությունը և հարվածայնությունը, ինչպես գործարանների միջև, այնպես էլ ձեռնարկությունների ներսում, լայն ծավալ ստացան։ 1932 թ. 72 տոկոսի փոխարեն, 1933 թ. սոցմրցման մեջ էր մայրաքաղաքի ձեռնարկությունների բանվորների 86 տոկոսը[20]։

1934 թ. հունվարի 30-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ՀԱՄԽ-ը ամփոփեցին նախահամագումարյան սոցիալիստական մրցության արդյունքները։ Համկ(բ)Կ XVII համագումարի անվան հանրապետական կարմիր տախտակին բարձրացվեց Երևանի պահածոների գործարանը, որը տարեկան պլանը կատարեց մոտ 2 ամիս շուտ, պլանից դուրս տալով 1 միլիոն 907 հազար պայմանական տուփ պահածո, իսկ 1934 թ. հունվարի պլանը կատարեց համագումարի բացման նախօրյակին՝ հունվարի 21-ին[21]։

Երևանի մեխանիկական գործարանի, ձեթ-օճառի կոմբինատի, «Արարատ» տրեստի գինու և Ղարաքիլիսայի քիմիական կոմբինատների կոլեկտիվները ներկայացվեցին Հայկական ՍՍՀ Կենտգործկոմի պատվոգրով պարգևատրմանը[22]։

Համաժողովրդական սոցիալիստական մրցությունը և աշխատանքային խիրագործությունները լայն թափ ստացան Համկ(բ)Կ XVII համագումարից անմիջապես հետո։

Ղափանի և Ալավերդու լեռնագործները, ձեռնամուխ լինելով համագումարի որոշումների կատարմանը, մտան սոցիալիստական մրցության մեջ։ Ալավերդու պղնձի հանքերում մինչև մարտի 18-ը սոցիալիստական մրցության պայմանագրեր կնքվեցին բոլոր բրիգադների, հերթափոխների և առանձին բանվորների միջև։ Նկատի ունենալով, որ Ալավերդու պղնձի կոմբինատը վերջին մեկ տարում պլանների լուրջ թերակատարում ուներ, ՀԿ(բ)Կ Կենտկոմը և հանրա-

17 «Խորհրդային Հայաստան», 11 դեկտեմբերի 1933 թ.։
18 Նույն տեղում։
19 Նույն տեղում։
20 «Խորհրդային Հայաստան», 6 հունվարի 1934 թ.։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում։

պետությունն կառավարությունը տեղում օգնություն ցույց տալու համար Ալավերդի գործուղեցին Գուլոյանին և Օրդուխանյանին։ Մարտի 10-ին Գուլոյանը հրավիրում է ձուլարանի տնտեսական, կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունների, ինչպես նաև տեխնիկական անձնակազմի խորհրդակցություն, որտեղ քննարկվում է ձուլարանը ճեղքվածքից հանելու հարցը[23]։

Ընդունված բանաձևում ձուլարանի բանվորները մի շարք գործնական պարտավորություններ են ստանձնում պլանային առաջադրանքները կատարելու համար։ Մի քանի օրվա ընթացքում նրանք գործարկում են մանր հանքաքարի կիզարանը և երկրորդ կոնվերտորը։ Մարտի 12-ին ներկայացուցիչներ են ուղարկվում շամլուղցիների մոտ, նրանց հետ սոցիալիստական մրցության պայմանագիր կնքելու համար։

Սակայն հանրապետության պղնձարդյունաբերության երկու խոշոր արտադրական ձեռնարկությունների միջև սոցիալիստական մրցությունը լայնորեն ծավալվեց միայն մայիս ամսից, երբ Ալավերդու կոմբինատի հարվածայիններն հավարը մրցության հրավիրեց Ղափանի պղնձարդյունաբերության բանվորությանը։ Դիմումը քննարկվեց Ղափանի բոլոր հանքերում, արտադրամասերում և ձուլարանում։ Նրանք ընդունեցին Ալավերդու բանվորների սոցիալիստական մրցահրավերը։ Կատարելով սոցմրցմամբ վերցված պարտավորությունները, Ղափանի լեռնագործները 1934 թ. 2-րդ եռամսյակում ստացան 4025 տոննա տեսակավոր հանքաքար, կատարեցին 1696 մետր հետախուզական աշխատանքի, եռամսյակի 300 տոննա սև պղնձի արտադրության, պղնձի ինքնարժեքի իջեցման պլանները[24]։

Ալավերդու Լենինյան հանքերում ստեղծված ոգևորությունը այն աստիճանի հասավ, որ մինչև իսկ 40 ծեր՝ նախկին հորատողներ, որոնք անցել էին թոշակի, ինքնակամ մեկնեցին հանքերը և հին հորատողի փորձառու աչքով տեսակավորեցին հանքաքարը[25]։

Հայաստանի արդյունաբերության 1934 թ. առաջին կիսամյակի հանրապետարանների համար չափազանց բնորոշ է այն բեկումը, որն ստեղծվել էր այդ ժամանակաշրջանում պղնձի արդյունաբերության մեջ։ Այս բոլորի արդյունքը եղավ այն, որ հատկապես 2-րդ եռամսյակի սկզբից Ալավերդու և Ղափանի կոմբինատները որոշակի շրջադարձ կատարեցին իրենց աշխատանքներում, վերացնելով խրոնիկական ճեղքվածքը։

Վերը բերված հաջողությունների առթիվ «Խորհրդային Հայաստան» թերթը, որպես Ղափանի և Ալավերդու մրցակցության արբիտր, հաղթողներին հղեց հետևյալ հեռագիրը. «Խորհրդային Հայաստանի» խմբագրությունը ջերմորեն ողջունում է Ղափանի պղնձարդյունաբերության հերոսական բանվորներին, որոնք կատարեցին առաջին կիսամյակի պլանը և անշեղորեն զարգացնում են իրենց հաջողությունները։ Դուք կատարեցիք նաև հուլիս ամսվա պլանը. այդ ցույց է տալիս, որ դուք հաստատապես բռնել եք վճռական վերելքի ճանապարհ։ Ամրացրեք, ընկերներ, ձեր նվաճած դիրքերը... Ավելի շատ պղինձ տվեք երկրին»[26]։

---

23 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 23, գ. 179, թ. 45։

24 «Խորհրդային Հայաստան», 5 հուլիսի 1934 թ.։

25 Նույն տեղում, 5 մայիսի 1934 թ.։

26 «Խորհրդային Հայաստան», 5 օգոստոսի 1934 թ.։

Սոցիալիստական մրցության թափի ու նրա ծավալման մասին հատուկ պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը[27]։

Սոցիալիստական մրցությունը էլ ավելի ծավալվեց 1934 թ. 2-րդ կիսամյակում և 1935 թ. սկզբին, ընդունելով նորանոր ձևեր, երբ կուսակցությունը կոչ արեց տիրապետել տեխնիկային։

Վ. Ի. Լենինը իր «Սովետական իշխանության հերթական խնդիրները» աշխատության մեջ գրում էր. «Առանց գիտության, տեխնիկայի, փորձի, զանազան ճյուղերի մասնագետների ղեկավարության, անկարելի է սոցիալիզմի անցնել, որովհետև սոցիալիզմը պահանջում է գիտակից և մասսայական առաջընթաց շարժում դեպի աշխատանքի ամենաբարձր արտադրողականության կապիտալիզմի համեմատությամբ և կապիտալիզմի ձեռք բերած հիմքի վրա»[28]։

Բանվորների կողմից տեխնիկային տիրապետելու ուղղությամբ Հայաստանի կուսակցական կազմակերպությունների հետագա գործունեությունը ընթանում էր պետական տեխնիկական քննության ձևով։ Պետական տեխնիկական քննությունը մտցվեց 1934 թ. դեկտեմբերի 29-ին ՍՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմ Ս. Օրջոնիկիձեի կողմից։ Քննության այդ ձևը նպաստեց արդյունաբերական կադրերի պատրաստման գործին։

Սոցմրցման և հարվածայնության ծավալման շնորհիվ հսկայական թվով բանվորություն ընդգրկվեց տեխուսուցման խմբակներում։ Կյանքում կենսագործելով տեխնիկան տիրապետելու մասին կուսակցության լոզունգը, տեխուսուցման խմբակներում Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների տասնյակ հարյուրավոր բանվորներ բարձրացրին իրենց որակավորումը։ Ալավերդու պղնձի կոմբինատի դիրեկցիան ու հասարակական կազմակերպությունները տեխմինիմումի խմբակներում ընդգրկեցին 351 հոգի, որից մայիսին պետ. տեխ. քննություն հանձնեցին՝ 252 բանվորներ, ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններում սովորում էին 40 հորատողներ[29]։ Երևանի պահածոների գործարանում պլանավորված էր 4 հիմնական արտադրամասերում, տարբեր մասնագիտությունների գծով, պետ. տեխ. քննության ձևով ուսուցանելու 145 բանվորի։ Յուրաքանչյուր մասնագիտության գծով ժամանակին կազմվել է ուսումնական ծրագիր, առանձնացվել են ղեկավարներ և պարբերաբար հրավիրվել պարապմունքներ. քննությունները հաջող հանձնել են 117 մարդ[30]։ Քանաքեռի հիդրոէլեկտրակայանի շինարարությունում արդեն մայիսի 30-ին պետական տեխնիկական քննություն էին հանձնել 207 բանվորներ[31]։ Լենինականի մանվածքային ֆաբրիկայում կազմակերպվել և գործել են 42 խմբակ, որտեղ ընդգրկվել են 604 մարդ, գուլպայի ֆաբրիկայում՝ 21 խմբակ՝ 453 ունկնդիրներով։ Գուլպայի ֆաբրիկայում ինժեներա-տեխնիկական անձնակազմի 80 տոկոսը նույնպես ընդգրկված էր տեխուսուցման մեջ[32]։

Տեխնիկայի տիրապետման, նոր վերակառուցվող ձեռնարկությունները ժամանակին գործարկելու համար մղվող պայքարում, հանրապետության տնտեսական, կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունները ձեռք

27 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 22, գ. 118, թ. 209։
28 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 295։
29 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 23, գ. 169, թ. 165։
30 Նույն տեղում, գ. 179, ց. 23, թ. 71։
31 Նույն տեղում, թ. 84։
32 Նույն տեղում, թ. 78—79։

	Արտադրության ճյուղերը	1934 թ. ապրիլի 1-ը						1934 թ. հունիսի 1-ը					
		բանվորներ			ինժեներ-տեխնիկներ			բանվորներ			ինժեներ-տեխնիկներ		
		ընդամենը	ներգրավված ձգի դարձակների քանակը	ներգրավվածների %-ը	ընդամենը	ներգրավված ձգի դարձակների քանակը	ներգրավվածների %-ը	ընդամենը	ներգրավված ձգի դարձակների քանակը	ներգրավվածների %-ը	ընդամենը	ներգրավված ձգի դարձակների քանակը	ներգրավվածների %-ը
1	Գունավոր մետալուրգիա	2917	2327	79,8	180	148	82,2	3473	2740	78,9	189	164	86,8
2	Մեքենաշինություն . .	264	256	97,0	39	39	100,0	300	291	97,0	38	27	71,1
3	Քիմիական	80	77	96,3	8	8	100,0	72	69	95,8	9	5	55,6
4	Կենցաղային	1785	1362	76,3	90	51	56,7	153,6	1178	76,7	82	49	59,8
5	Փայտամշակման	435	346	68,5	36	33	91,7	397	257	64,7	39	33	84,6
6	Պոլիգրաֆ	437	431	98,6	36	36	100,0	457	457	100,0	33	33	100,0
7	Բամբակամանվման . .	2622	2105	80,3	109	85	78,0	2455	2334	95,5	108	108	100,0
8	Մեխանաքանոցային . .	1076	972	90,3	47	39	83,0	1133	1099	97,0	43	39	90,7
9	Կաշվի	90	85	94,5	24	16	66,7	91	88	96,7	26	23	88,5
10	Կալի	1379	876	63,5	41	41	100,0	1133	1039	91,7	62	51	82,5
11	Հացի	612	586	95,6	22	22	100,0	652	621	95,0	34	30	88,2
12	Պանածոների	807	705	87,4	102	93	91,2	902	795	81,1	101	98	97,0
13	Արդյունաբերական շինարարություն	12992	10557	81,3	792	660	83,4	13147	11402	86,7	818	704	86,1
14	Բնակարանային շինարարություն	7083	3777	53,3	235	157	66,8	6642	3515	52,9	204	146	71,1

բերեցին զգալի հաջողություններ։ Որակական փոփոխություններ կատարվեցին Հայաստանի բանվոր դասակարգի կազմում։ Մեծ չափով աճեց բարձր որակավորում ունեցող կադրերի տեսակարար կշիռը, երևան եկան նոր մասնագիտության բանվորներ, իսկ դա իր հերթին հասցրեց բանվոր-դասակարգի դերի ուժեղացմանը՝ տնտեսական-կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում։

Տեխնիկայի տիրապետման, բանվորական կադրերի տեխնիկական-կուլտուրական մակարդակի բարձրացման շնորհիվ մասսայական շարժում սկսվեց բարձրորակ, գերազանց արտադրանք տալու համար։

Առաջավոր ձեռնարկությունների կոչը՝ գերազանց աշխատելու վերաբերյալ, մեծ շարժում առաջացրեց Հայաստանի ողջ աշխատավորության շրջանում։ Հանրապետությունում Մոսկվայի Մենժինսկու անվան գործարանի կոլեկտիվի կոչին առաջինը արձագանքեցին թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկությունների բանվորները։ 1935 թ հունվարին Լենինականի մանվածա-գործվածքային կոմբինատի կոլեկտիվը քննարկելով մենժինսկցիների նախաձեռնությունը, որոշեց աշխատել նրանց օրինակով։ Արդյունքը եղավ այն, որ գործող արտադրամասի բանվորուհիներ՝ Ս. Վարդանյանը, Ց. Նիկոգոսյանը, Լ. Մուրադյանը առաջին եռամսյակում արտադրեցին միայն «գերազանց» և «լավ» որակի արտադրանք[33]։ Կոմբինատի բոլոր գործարանները արտադրանքի որակի բարձրացման գործում առաջին կիսամյակում հասան զգալի հաջողությունների։ 1934 թ. նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին նոր գործվածքային գործարանի արտադրանքի 22,85 տոկոսը խոտան էր։ Արձագանքելով մոսկվացիների կոչին և պայքարելով բարձր որակի համար, 1935 թ. առաջին եռամսյակում խոտանի տոկոսը իջավ 6,75 տոկոսի։ Հին գործվածքային գործարանում նույն ժամանակաշրջանում խոտանը եղել էր 21,63 տոկոս, իսկ հունվար-մարտին այն հասավ 5,29 տոկոսի։

Գերազանց որակի արտադրանքի համար պայքարողների առաջին շարքերում էր նաև Լենինականի կարի ֆաբրիկան։ Ֆաբրիկայում աշխատող 641 բանվորներից սոցմրցման մեջ ընդգրկված էին 473 մարդ։ Որակի համար պայքարող 5-րդ արտադրամասի 46 բանվորուհիներից 44-ը մասնակցում էր գերազանց որակի համար պայքարող արտադրական արշավին։ Գերազանցիկներից աչքի էին ընկնում Ս. Շահբազյանը, Գ. Ղազարյանը, Հ. Ստեփանյանը, Հ. Պետրոսյանը, որոնք 1935 թ. առաջին եռամսյակում և ապրիլ ամսին արտադրեցին միայն «գերազանց» և «լավ» որակի արտադրանք[34]։

Գերազանց արտադրանքի համար պայքարում էին նաև սննդարդյունաբերության ձեռնարկությունները։ Արտադրված ապրանքների որակի բարելավման տեսակետից զգալի աշխատանք կատարեց «Արարատ» տրեստը, որը 1935 թ. առաջին կիսամյակում արժանացավ ՍՍՀՄ սննդարդյունաբերության ժողկոմատի 2-րդ մրցանակի և դրամական պարգևի։ Ինքնարժեքի իջեցման հաշվին տրեստը տվեց 208 հազար ռուբլու տնտեսում[35]։

Առաջին կիսամյակում Երևանի պահածոների գործարանի ամբողջ արտադրանքի 68 տոկոսը առաջին տեսակի էր, նախատեսված 3 տոկոս խոտանը իջեցվեց՝ 1,23 տոկոսի։ Եթե առաջին տեսակի արտադրանքը առաջին եռամսյա-

---

33 «Բանվոր», 6 ապրիլի 1935 թ.։

34 «Բանվոր», 5 մայիսի 1935 թ.։

35 «Խորհրդային Հայաստան», 7 հուլիսի 1935 թ.։

կում կազմում էր 33 տոկոս, ապա երկրորդում այն հասավ 74 տոկոսի[36]։ Բանջարեղենի արտադրամասի փետրվար ամսվա առաջին տասնօրյակի ամբողջ արտադրանքը միայն գերաղանց որակի էր[37]։

Մինչև 1934 թ. վերջը Երևանի ծխախոտի ֆաբրիկայի արտադրանքը իր որակով Միության մեջ բռնում էր վերջին տեղերից մեկը։

Գերազանցիկների շարժման շնորհիվ, ոչ միայն լավացավ արտադրանքի արտաքին տեսքը, այլև նրա որակը։ Եթե 1934 թ. առաջին կիսամյակում այն ստացել էր բավարար գնահատական և Միության մեջ բռնել 11-րդ տեղը, երկրորդ կիսամյակում՝ 7-րդ, ապա 1935 թ. առաջին կիսամյակում հաստատապես բռնեց առաջին տեղերից մեկը[38]։

1935 թ. երկրորդ կիսամյակում ողջ ՍՍՀՄ-ի հետ միասին Հայաստանի արդյունաբերությունը թևակոխեց նոր առաջընթաց։ Արդյունաբերության գլխավոր ճյուղերը իրենց արտադրանքի քանակով և որակով գերազանցեցին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի արտադրական ցուցանիշները։ Ամբողջ արդյունաբերությունը 1935 թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճեց 14,6 տոկոսով[39]։ Զարդացման առավել բարձր թափ են ունեցել միութենական նշանակություն ունեցող ձեռնարկությունները, որոնց արտադրանքը մեկ տարվա ընթացքում աճել է 51,5 տոկոսով[40]։

Վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս, որ հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների բանվորները, ինժեներա-տեխնիկական աշխատողները, կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ, պայքարում էին երկրորդ հնգամյակի խնդիրները ժամկետից շուտ կատարելու, արդյունաբերության բոլոր ճյուղերում աշխատանքի արտադրողականության բարձրացմանը նպաստող նոր մեթոդներ ու ձևեր կիրառելու համար։

Այսպիսով, սոցիալիստական մրցությունը և առաջավոր բանվորների ստեղծագործական նախաձեռնությունը դարձել էր այն փորձված միջոցը, որով կուսակցությունը մոբիլիզացնում էր աշխատավոր մասսաներին սոցիալիստական հասարակարգի կառուցման համար։

---

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում։

38 Նույն տեղում, 11 հուլիսի 1935 թ.։

39 Նույն տեղում։

40 «Խորհրդային Հայաստան», 16 օգոստոսի 1935 թ.։